ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝
Իրավունքի Ինստիտուտի
տնօրեն
Մ. Ա. Քալաշյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ
ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ) ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МИНИСТЕРСТВО НАУКИ И ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ РФ
РОССИЙСКО-АРМЯНСКИЙ (СЛАВОНСКИЙ) УНИВЕРСИТЕТ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ПРАВА

«04» հուլիսի 2025 թ

Ինստիտուտ՝ Իրավունքի
Ամբիոն՝ Քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի Արժեթղթերի շուկայի իրավական կարգավորումը

Հեղինակ՝ իր. գ. թ., ավագ դասախոս Բաբայան Կարեն Գաբրիելի

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Արժեթղթերի շուկայի իրավական կարգավորումը

Մագիստրոսի կրթական ծրագիր՝ 042101.05.7 «Գործարարական իրավունք»

Դասիչ մասնագիտություն՝ 042101.00.7 «Իրավագիտություն»

Դասընթացի անոտացիան

«Արժեթղթերի շուկայի իրավական կարգավորում» դասընթացը իրավունքի համալիր ճյուղ է, որը ներառում է քաղաքացիական և վարչական իրավունքի բաղադրիչներ: Ժամանակակից աշխատաշուկան իրավաբանների առջև առաջադրում է ավելի խիստ պահանջներ՝ գիտելիքների և հմտությունների շրջանակի առումով, որոնք հաճախ դուրս են գալիս ոչ միայն մեկ իրավունքի ճյուղի սահմաններից, այլև կոնկրետ մասնագիտությունից: Սա վերաբերում է նաև արժեթղթերի կարգավորման ոլորտին, որտեղ մարդկային երևակայությունը ամեն օր նոր խնդիրներ է առաջադրում իրավաբանների համար:

Այս առումով արժեթղթերի շուկայում աշխատող իրավաբանը պետք է ոչ միայն իմանա իրավական կարգավորումները, այլև հասկանա արժեթղթերի էությունը: Այդ պատճառով «Արժեթղթերի շուկայի իրավական կարգավորում» դասընթացի ուսումնասիրությունը հատկապես արդիական է:

Դասընթացի օբյեկտը և առարկան

Դասընթացի օբյեկտը՝ արժեթղթերի շուկայի հասարակական հարաբերություններն են, որոնք ձևավորվում են արժեթղթերի թողարկման, շրջանառության և դրանց հետ կապված գործունեության ընթացքում:

Դասընթացի առարկան՝ այն իրավական նորմերի, սկզբունքների և մեխանիզմների համակցությունն է, որոնք կարգավորում են արժեթղթերի շուկայի գործունեությունը, ներառյալ արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության, ինչպես նաև շուկայի մասնակիցների իրավունքների և պարտականությունների սահմանումը:

Դասընթացի նպատակը և խնդիրները

«Դասընթացի նպատակը՝ ուսանողներին տրամադրել համակարգված գիտելիքներ արժեթղթերի շուկայի իրավական կարգավորման վերաբերյալ, ձևավորել ոլորտում կողմնորոշվելու կարողություն և զարգացնել իրավաբանական վերլուծական հմտություններ՝ կիրառելի ինչպես տեսական, այնպես էլ գործնական մակարդակում:

Դասընթացի խնդիրները՝

1. ուսումնասիրել արժեթղթերի շուկայի իրավական կարգավորման հիմնական սկզբունքները և ինստիտուտները,
2. ներկայացնել արժեթղթերի տեսակները և դրանց իրավական բնույթը,
3. վերլուծել արժեթղթերի թողարկման, տեղաբաշխման և շրջանառության գործընթացները,

ուսումնասիրել շուկայի մասնակիցների իրավական կարգավիճակը, նրանց իրավունքներն ու պարտականությունները,

4. բացահայտել արժեթղթերի շուկայում պետական կարգավորման և վերահսկողության մեխանիզմները,
5. զարգացնել իրավական նորմերի կիրառման և գործնական խնդիրների լուծման հմտություններ:

Դասընթացի մուտքային պահանջները

Այս դասընթացն ուսումնասիրելու համար ուսանողները պետք է ունենան քաղաքացիական և վարչական իրավունքի գիտելիքներ, ինչպես նաև տնտեսագիտության և գործարար պրակտիկայի նվազագույն գիտելիքներ:

Դասավանդման եղանակները և մեթոդները

Արժեթղթերի շուկայի իրավական կարգավորում» դասընթացի դասավանդումը հիմնվում է տեսական գիտելիքների և գործնական հմտությունների համադրության վրա՝ ապահովելով ուսանողների խորացված ըմբռնումը և կիրառական կարողությունների զարգացումը:

Դասավանդման ընթացքում կիրառվում են հետևյալ մեթոդներն ու մոտեցումները՝

դասախոսություններ՝ ուղղված տեսական հիմքերի, հիմնական հասկացությունների և իրավական ինստիտուտների ներկայացմանը,
սեմինարներ և քննարկումներ՝ նպատակ ունենալով զարգացնել ուսանողների վերլուծական մտածողությունը և իրավական դիրքորոշում ձևավորելու կարողությունը,

գործնական առաջադրանքներ (case study)՝ իրական կամ մոդելային իրավիճակների միջոցով իրավական նորմերի կիրառման հմտությունների ձևավորման համար,
իրավական ակտերի և դատական պրակտիկայի վերլուծություն՝ արժեթղթերի շուկայի կարգավորման առանձնահատկությունները խորությամբ հասկանալու նպատակով,
խմբային աշխատանքներ և ներկայացումներ՝ թիմային աշխատանքի և մասնագիտական հաղորդակցության հմտությունների զարգացման համար,

Դասընթացի տեղն ուսումնական ծրագրում

Դասընթացը ներառված է «Ապահովագրական իրավունք» կրթական ծրագրում՝ 3 ակադեմիական կրեդիտ (18 ակադեմիական ժամ) աշխատատարությամբ, որից 8 ժամ դասախոսություն, 10 ժամ գործնական պարապմունքներ:

Դասընթացը նախատեսվում է ուսումնասիրել 1 -րդ կուրսի 2-ին կիսամյակում:

Ուսումնական աշխատանքի տեսակները	**Ընդամենը, ակադ. ժամեր**
1. Առարկայի ուսումնասիրման ընդհանուր աշխատատարությունն, այդ թվում՝	**108**
1.1. Լսարանային պարապմունքներ, այդ թվում՝	**32**
1.1.1. Դասախոսություններ	**16**
1.1.2. Գործնական պարապմունքներ, այդ թվում՝	**16**
1.1.2.1. Ստուգողական աշխատանքներ	**36**
1.2. Ինքնուրույն աշխատանք, այդ թվում՝	**40**
1.2.1.Քննություններին նախապատրաստում	**20**
1.2.2.Ինքնուրույն աշխատանքի այլ տեսակներ, այդ թվում՝ (նշել)	**20**
1.2.2.1. Գրավոր ինքնուրույն աշխատանքներ	**10**
1.2.2.2. Էսսե և ռեֆերատներ	**10**
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**քննություն**

Դասընթացի ծավալի բաշխում (ակադեմիական ժամերով) ըստ թեմաների և ուսումնական աշխատանքի տեսակների

Առարկայի բաժինները և թեմաները	Ընդամենը	Դասախոսու-թյուններ	Գործնական / սեմինար պարապմունքներ
1	**2=3+4**	**3**	**4**
Թեմա 1. Ֆինանսական շուկաների հասկացությունը և դերը ժամանակակից տնտեսությունում: Արժեթղթերի հասկացությունը: Արժեթղթերի շուկայի ձևավորումն ու էվոլյուցիան:	**4**	**2**	**2**
Թեմա 2. Ներդրումային գործունեության իրավական կառուցակարգերը: Ներդրումային գործունեության սուբյեկտները:	**4**	**2**	**2**
Թեմա 3. Արժեթղթերի դասակարգումը՝ ներդրումային արժեթղթեր, դերիվատիվներ, ժամկետային պայմանագրեր:	**4**	**2**	**2**
Թեմա 4. Արժեթղթերի թողարկումը (էմիսիան) և առաջարկի տարածքային իրավասությունը:	**4**	**2**	**2**
Թեմա 5. Արժեթղթերի շրջանառության կարգավորումը բորսաներում և արտաբորսայական շուկայում:	**4**	**2**	**2**
Թեմա 6. Ակտիվների սեկյուրիտիզացիայի հասկացությունը և դրա իրավական կարգավորումը:	**6**	**3**	**3**

Թեմա 7. Էթիկայի հարցերը արժեթղթերի շուկայում. իրավախախտումներ արժեթղթերի շուկայի ոլորտում:	**6**	**3**	**3**
Ընդամենը	**32**	**16**	**16**

Դասընթացի թեմաների բովանդակությունը

Թեմա 1. Ֆինանսական շուկաների հասկացությունը և դերը ժամանակակից տնտեսությունում: Արժեթղթերի հասկացությունը: Արժեթղթերի շուկայի ձևավորումն ու էվոլյուցիան

Այս թեմայի շրջանակներում ուսումնասիրվում են ֆինանսական շուկաների էությունը, գործառույթները և տեղը ժամանակակից տնտեսության մեջ: Քննարկվում են կապիտալի բաշխման, ներդրումների խթանման և տնտեսական զարգացման ապահովման մեխանիզմները: Վերլուծվում է արժեթղթերի հասկացությունը, դրանց իրավական բնույթը և հիմնական հատկանիշները: Ներկայացվում է նաև արժեթղթերի շուկայի պատմական զարգացումը, դրա ձևավորման փուլերը և արդի միտումները:

Թեմա 2. Ներդրումային գործունեության իրավական կառուցակարգերը: Ներդրումային գործունեության սուբյեկտները

Թեման ընդգրկում է ներդրումային գործունեության իրավական հիմքերը և կազմակերպման ձևերը: Ուսումնասիրվում են ներդրումային հարաբերությունների հիմնական սուբյեկտները՝ ներդրողներ, թողարկողներ, միջնորդներ և կարգավորող մարմիններ: Քննարկվում են նրանց իրավական կարգավիճակը, իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև փոխհարաբերությունների կառուցվածքը:

Թեմա 3. Արժեթղթերի դասակարգումը՝ ներդրումային արժեթղթեր, դերիվատիվներ, ժամկետային պայմանագրեր

Այս թեմայում ուսումնասիրվում են արժեթղթերի տեսակները և դրանց դասակարգման չափանիշները: Վերլուծվում են հիմնական ներդրումային արժեթղթերը (ակցիաներ, պարտատոմսեր), ինչպես նաև դերիվատիվ գործիքները և ժամկետային պայմանագրերը:

Քննարկվում է դրանց տնտեսական և իրավական էությունը, կիրառման նպատակները և ռիսկերը:

Թեմա 4. Արժեթղթերի թողարկումը (էմիսիան) և առաջարկի տարածքային իրավասությունը

Թեման նվիրված է արժեթղթերի թողարկման գործընթացին՝ դրա փուլերին, իրավական պահանջներին և ընթացակարգերին: Ուսումնասիրվում են թողարկման փաստաթղթերը, տեղեկատվության բացահայտման պահանջները և թողարկողների պարտականությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում առաջարկի տարածքային իրավասությանը և միջազգային կարգավորման առանձնահատկություններին:

Թեմա 5. Արժեթղթերի շրջանառության կարգավորումը բորսաներում և արտաբորսայական շուկայում

Այս թեմայում ուսումնասիրվում են արժեթղթերի շրջանառության մեխանիզմները՝ կազմակերպված (բորսայական) և արտաբորսայական շուկաներում: Քննարկվում են առևտրի կանոնները, գործարքների իրականացումը, միջնորդների դերը և շուկայի թափանցիկության ապահովման միջոցները: Վերլուծվում են նաև պետական վերահսկողության և կարգավորման գործիքները:

Թեմա 6. Ակտիվների սեկյուրիտիզացիայի հասկացությունը և դրա իրավական կարգավորումը

Թեմայի շրջանակներում ներկայացվում է սեկյուրիտիզացիայի էությունը՝ որպես ֆինանսական գործիք, դրա կիրառման նպատակներն ու մեխանիզմները: Ուսումնասիրվում են ակտիվների փաթեթավորման, արժեթղթավորման և դրանց տեղաբաշխման գործընթացները: Քննարկվում են նաև իրավական կարգավորման առանձնահատկությունները և հնարավոր ռիսկերը:

Թեմա 7. Էթիկայի հարցերը արժեթղթերի շուկայում. իրավախախտումներ արժեթղթերի շուկայի ոլորտում

Այս թեման անդրադառնում է արժեթղթերի շուկայում էթիկական նորմերին և դրանց նշանակությանը: Ուսումնասիրվում են հիմնական իրավախախտումները՝ ինսայդերական տեղեկատվության օգտագործում, շուկայի մանիպուլյացիա և այլ խախտումներ:

Քննարկվում են դրանց կանխարգելման մեխանիզմները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները:

Առաջարկվող գրականություն

1. Килячков А.А., Чалдаева Л.А. Рынок ценных бумаг и биржевое дело. - М., 2003,
2. Галанова В.А, Басова А.И., Рынок ценных бумаг, - М, 2008,
3. А.В. Майфат, Гражданско-правовые конструкции инвестирования, Москва, 2007,
4. Решение Верховного Суда США от 1946 г. по делу *SEC vs. Howey Co., 328, US, 293 (1946), https://supreme.justia.com/cases/federal/us/328/293/case.html*,
5. В.А. Лялин, П.В. Воробьев. Рынок ценных бумаг. М., Проспект, 2009,
6. В.А. Белов Ценные бумаги в российском гражданском праве. М., Юринфор, 1996,
7. Информационное письмо Высшего Арбитражного Суда РФ от 21 января 2002г: Обзор практики рассмотрения арбитражными судами споров, связанных с применением норм о договоре о залоге и иных обеспечительных сделках с ценными бумагами, http://www.arbitr.ru/as/pract/vas_info_letter/2985.html,
8. Информационное письмо Высшего Арбитражного Суда РФ от 30 октября, 2007г: Обзор практики применения арбитражными судами положений главы 24 Гражданского Кодекса РФ, http://arbitr.ru/as/pract/vas_info_letter/18448.html,

Քննական հարցաշար

- Ֆինանսական շուկաների ընդհանուր բնութագիրը տնտեսության զարգացման ներկա փուլում,
- Առաջնային և երկրորդային շուկաների հասկացությունը,
- Արժեթղթի ընդհանուր բնութագիրը,
- Արժեթղթերի շուկայի կարգավորման սկզբունքները,
- Ֆինանսական շուկաների հետ կապված ռիսկերի ընդհանուր բնութագիրը,
- Ֆինանսական ճգնաժամերի ընդհանուր բնութագիրը,
- Ներդրումային պայմանագրի հասկացությունը և ընդհանուր բնութագիրը,
- Արժեթղթի իրավական և տնտեսական ռեկվիզիտները,
- Պայմանագրերի կառուցումը արժեթղթերի օգտագործմամբ,
- Արժեթղթերի թողարկողի (էմիտենտի) կարգավիճակը ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Վարկանիշային գործակալությունները և թողարկողները,

- Ներդրումային միջնորդի կարգավիճակը ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Սպառողների իրավունքների պաշտպանությունը ֆինանսական շուկաներում,
- Ներդրումային ֆոնդերի կարգավիճակը ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Ինստիտուցիոնալ ներդրողները ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Ֆոնդային բորսայի կարգավիճակը ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Արտաբորսայական շուկայի կազմակերպիչների կարգավիճակը ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Ֆինանսական շուկաների գործունեությունն ապահովող կազմակերպությունների կարգավիճակը,
- Արժեթղթերի դասակարգման հիմքերը,
- Արժեթղթերի տեսակները ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Ակցիայի ընդհանուր բնութագիրը որպես արժեթուղթ,
- Պարտատոմսի ընդհանուր բնութագիրը որպես արժեթուղթ,
- Երկրորդային արժեթղթերի ընդհանուր բնութագիրը և դրանց կարգավորումը,
- Ժամկետային պայմանագրերի ընդհանուր բնութագիրը և դրանց կարգավորումը,
- Բորսայական ինդեքսների բնութագիրը,
- Արժեթղթի թողարկման (էմիսիայի) հասկացությունը,
- Արժեթղթի թողարկման ընթացակարգը,
- Թողարկման պրոսպեկտը և դրա նկատմամբ պահանջները ՀՀ և ՌԴ օրենսդրությամբ,
- Պետության տարածքային իրավասության ընդհանուր բնութագիրը արժեթղթի առաջարկի նկատմամբ,
- Սեկյուրիտիզացիան՝ որպես ֆինանսական միջոցների ներգրավման եղանակ. էությունը և ընդհանուր բնութագիրը,
- Սեկյուրիտիզացիայի գործընթացը և ակտիվների սեկյուրիտիզացիայի հետ կապված ռիսկերը,
- Ակտիվների սեկյուրիտիզացիայի քաղաքացիաիրավական կառուցակարգերը,
- Վարկանիշային գործակալությունների դերը ակտիվների սեկյուրիտիզացիայի գործընթացում,
- Հատուկ նշանակության ընկերության կարգավիճակի կարգավորման խնդիրները,
- Ցեսիան և ակտիվների սեկյուրիտիզացիայի խնդիրները,
- Ակտիվների սեկյուրիտիզացիան և 2008 թ. ֆինանսական ճգնաժամը,
- Էթիկան ֆինանսական շուկաներում և սպառողների իրավունքների պաշտպանությունը,
- Ֆինանսական շուկաների էթիկայի հիմնական բաղադրիչները,
- Ինսայդերական տեղեկատվության ապօրինի օգտագործումը,
- Շուկաների մանիպուլյացիայի բնութագիրը:

Նյութատեխնիկական ապահովում

Ամբիոնը/գիտական ստորաբաժանումը տիրապետում է նյութատեխնիկական բազայի, որը համապատասխանում է գործող սանիտարատեխնիկական նորմերին և ապահովում է ուսումնական պլանով նախատեսված տեսական ու գործնական պատրաստության բոլոր ձևերի իրականացումը, ինչպես նաև ատենախոսական աշխատանքի արդյունավետ կատարումը: